ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

21-ը սեպտեմբերի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Սեպտեմբերի 21-ի՝
Հայաստանի անկախության օրվա առիթով

Սիրելի՛ հայրենակիցներ. աշխարհասփյուռ հայություն.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս համազգային տոնի՝ Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առիթով: Սեպտեմբերի 21-ը հայ ժողովրդի հայրենասիրությունը, անկոտրում կամքն ու հաղթական ոգին խորհրդանշող պատմական ամսաթիվ է: 33 տարի առաջ այս օրը հայ ազգը միասնաբար ու հաստատուն կամքով վճռեց ապրել ինքնիշխան պետությունում: Բարդ ու հաղթական ճանապարհով ձեռքբերված անկախությունը մեր ժողովուրդը մինչ օրս շարունակում է պահպանել պայքարով ու բազում փորձություններ հաղթահարելով:

Անկախությունը բացառիկ ու թանկ արժեք է, հանուն որի մենք կրել ենք մարդկային անդառնալի կորուստներ: Առաջին հերթին ուզում եմ երախտիքով ու խոնարհումով հիշենք մեզ ազատ ու անկախ հայրենիք պարգևելու համար իրենց կյանքը նվիրաբերած հերոս նահատակներին:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Սեպտեմբերի 21-ի վեհ խորհրդով առաջնորդվելով՝ յուրաքանչյուրս պիտի հայրենանվեր գործունեությամբ նպաստենք մեր հայրենիքի հզորացմանը, կայուն ու մրցունակ երկրի ստեղծմանը:

ՀՀ Անկախության տոնի առիթով կրկին շնորհավորում եմ բոլորիս, առանձնահատուկ շնորհավորում եմ ՀՀ սահմանները անառիկ պահող զինծառայողներին. խաղաղություն և բարօրություն եմ մաղթում մեր հայրենիքին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ